- Տնայցերի ժամագրաֆիկի կազմում և քննարկում
- Ընտանիքի առաջնային գնահատման կարիքների և ընդգրվող դեպքերի քննարկում
- Դեպքի քննարկում
- Սոցիալ-հոգեբանական աշխատանքի համակարգում: Շահառուների սոցիալական և հոգեբանական հիմնահարցերի վերաբերյալ քննարկում
- Չեկույցի պատրաստում
- Խմբակների/Պար, խոհարարություն, անգլերեն/ աշխատանքի համակարգում
- Շահագրգիռ կառույցների հետ աշխատանքի պլանավորում
- Ճանաչողական և ուսումնական այցերի, ճամբարի իրականացման պլանավորում և երեխաների ներգրավում տվյալ միջոցառումներին
- Համայնքային բարեկարգման աշխատանքների պլանավորում և իրականացում
- Հաջորդ եռամսա գործողությունների պլանավորում

<u>**Աշխատանք համագործակից կառույցների հետ:**</u> Հաշվետու ժամանակահատվածում դեպքերի վարման նպատակով կենտրոնը ակտիվորեն համագործակցել է հետևյալ շահագրգիռ կառույների հետ՝

- Գավառի Համայնքապետրան
- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
- Քյավառ հեռուստաընկերություն
- Հանրային հեռուստաընկերություն
- ՀՀ ՄԻՊ աշխատակազմի գրասենյակ
- Կանանց աջակցման կենտրոն
- Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց
- Գավառ քաղաքի Հովի. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց
- Գավառ քաղաքի N 5 հիմնական դպրոց
- Գավառ քաղաքի Ավ. Իսահակյանի անվան N4 հիմնական դպրոց
- Գավառի Մ.Բունիաթյանի №8 միջն. Դպրոց
- Գավառի Ս. Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոց
- Լոռե էքստրիմ պարկ
- Երևանի կենդանաբանական այգի

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների՝ նշելով Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունները հստակ տեսանելի են, շահառու երեխաները սոցիալապես ակտիվ են, ընդգրկված են համայնքային կյանքում, զգալիորեն բարելավված է նրանց կյանքի հմտությունների որակը:
Բոլոր շահառուների հետ կնքվել են սոցիալական բնույթի նվիրաբերության պայմանագրեր և կազմվել են ԱՍԾ-ներ:
Երեխաները և նրանց ընտանիքի անդամները ակտիվորեն ներգրավվելով ծառայություններում ձեռք են բերել վստահություն կառույցի և մասնագիտական թիմի նպատմամբ, ինչը հիմք է հանդիսացել անահատկան դեպքերի վարմանը և հաջողությունների արձանագրմանը:
Շահառու ծնողներին ներկայացվել է Հայկական Կարիտասի անվտանգության քաղաքականությունը և նրանք մշտապես ազատ կարողացել են արտահայտել իրենց կարծիքը և միտքը կենտրոնի կողմից իրականացվող ծառայությունների վերաբերյալ: